ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1951 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ, „ՊԻԵՍՆԵՐ". Ի. ԳՐԻՇԱՇՎԻԼՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ԱՌԱՋԱԲԱՆՈՎ, ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ԲԱՌԱՐԱՆՈՎ.

Թբիլիսի, 1950 թ. (վրացերեն լեզվով), էջ V—XXVII+366.

Վերջերս Թբիլիսիում լույս տեսավ հայ մեծանուն դրամատուրգ Գարրիել Սունդուկյանցի պիեսների ժողովածուն՝ Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ Իոսեր Գրիշաշվիլու խմբագրությամբ։ Ժողովածուին կցված են Ի. Գրիշաշվիլու առաջարանը՝ «Սունդուկյանցը վրաց բեմի վրա» վերտառությամբ, ծանոթագրությունները և բառարանը։

Հիշյալ ժողովածուում զետեղված են Գ. Սունդուկյանցի այն պիեսները, որոնք իրենց ժամանակին հայերենից վրացերեն թարգմանվել ու բազմաթիվ անգամ խաղացվել են վրացական բեմի վրա։ Այդպիսիներից են, նախ և առաջ, «Պեպոն», որի թարգմանությունը կատարել է ինքը՝ Գ. Սունդուկյանցը՝ վրաց պոետներ Ռափիել Էրիստավի, Իոսեր Բաքրաձեի և Ֆուրցայիսի թատերասեր Տեր-Դավիթ Յարալյանցի օժանդակությամբ։ Երկրորդ պիեսն է՝ «Պատարաղը»՝ Ի. Բաքրաձեի թարգմանությամբ. սա ունեցել է վրացերեն մի քանի թարգմանություններ. առաջին թարգմանությունը կատարել է Տեր-Դավիթ Յարալյանցը, իսկ երկրորդը՝ Իոսեր Բաքրաձեն։ Այնուհետև զետեղված է «Քանդած օջախը»՝ Ի. Բաքրաձեի թարգմանությամբ։ Վ. Արաշիձեի թարգմանությամբ զետեղված են՝ «Էլի մեկ դոն» (որի առաջին թարգմանությունը կատարել է Տեր-Դավիթ Յարալյանցը), «Բաղնիսի Բողչան» և «Դիշերվա սարսուռ խեր է»։ Վերջում դրված է «Օսկան Պետրովիչը էն կինքո՞մը»՝ Դ. Տեր-Դավթյանցի թարգմանությամբ։

Այսպիսով, հիշյալ գրքում զետեղված են Գ. Սունդուկյանցի պիեսներից յոթը, որոնք կատարված են հին թարգմանիչների կողմից։ Այդ պիեսները 1875 թվից սկսած մի քանի անգամ հայերենից վրացերեն թարգմանվել են վրաց և հայ տարբեր թատերասերների կողմից, խաղացվել են Թբիլիսիի, Քութայիսիի և Վրաստանի այլ քաղաքների վրացական բեմի վրա և տարբեր ժամանակներում նրանցից մի քանիսը նույնիսկ տպագրվել են առանձին։

Գ. Սունդուկյանցի պիեսների այսպիսի մի ժողովածուի հրատարակությունը վրացերեն լեզվով, անհրաժեշտ պահանջ էր, որը իրականացավ միայն սովետական իշխանության օրոք։ Թեև այդպիսի մի ցանկություն եղել է և հնուց, ինչպես այդ մասին հայտնում էր իր ընթերցողներին 1899 թվին «Իվերիա» թերթը (№ 188), որի խմբագիրն էր վրաց խոշորագույն գրող ու հասարակական գործիչ Իլիա Ճավճավաձեն։

Ներկա միհատորյակում, տպագրված են Գ. Սունդուկյանցի այն բոլոր հանրածանոթ պիեսները, որոնք մեծ հետաքրքրությամբ ու հաջողությամբ խաղացվում էին նաև վրաց բեմի վրա։ Ժողովածուից դուրս են մնացել Սունդուկյանցի «Ամուսիններ» և «Սեր և ազատություն» պիեսները. առաջինը հայերենից վրացերեն թարգմանել է Իոսեր Բաքրաձեն և վրաց բեմի վրա ներկայացվել է 1904 թվին, իսկ երկրորդը թարգմանել է Իոսեր Իմեդաշվիլին, բայց չի բեմադրվել (երկուսն էլ պահվում են Վրաց. ՍՍՌ Կենտր. արխիվում)։

Գ. Սունդուկյանցի պիեսների վրացերեն թարգմանության հրատարակությունը հայ և վրաց ժողովուրդների բարեկամական համագործակցության կարևոր էջերից մեկն է։

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը, — ընդգծում է Ի. Գրիշաշվիլին, — երկարատև պատմություն ունի։ Այս երկու ժողովուրդների, ինչպես նաև անդրկովկասյան մյուս ժողովուրդների ճակատագիրը միշտ էլ իրար հետ է եղել կապված։ Արտաքին նվաճողների հարձակումների ժամանակ նրանք ամեն անգամ իրար օգնության ձեռք են մեկնել իրենց հայրենիքի ազատության և անկախության համար, միշտ էլ գործով հաստատել են իրենց դարավոր բարեկամությունն ու եղբայրությունը։

Հայ և վրաց ժողովուրդների այդ դարավոր, պատմական բարեկամության է՛լ ավելի հաստատմանն ու ամրապնդմանը, — գրում է Ի. Գրիշաշվիլին, — իրենց հերթին նպաստում

էին 19-րդ դարի դործիչները՝ Իլիա Ճավճավաձեն, Ակակի Ծերեթելին, Ռափիել Էրիստավին, Գրիգոլ Օրբելիանին, Գաբրիել Սունդուկյանցը, Հովհաննես Թումանյանը և այլն։

Գաբրիել Սունդուկյանցը առաջիններից էր,—շարունակում է Գրիշաշվիլին,—որը մեծ սիրով ծառայում էր ինչպես հայ, այնպես էլ վրաց թատրոնին»։

Գ. Սունդուկյանցի ստեղծագործությունները հավասարապես հարազատ ու սիրելի էին հայ և վրաց բեմերի համար, որոնք իրենց լայն ճանաչումն ու գնահատումը գտան միայն սովետական իշխանության պայմաններում՝ Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականության իրականացման հիման վրա։

Այդ բարեկամությունը հիմք դարձավ Անդրկովկասի ոեսպուբլիկանների հոդի վերածնման ու բարգավաճման։

Գ. Սունդուկյանցի պիեսների վրացերեն հիշյալ ժողովածուն խմբագրված է ու կազմված մեծ խնամքով, ծանոթագրված է հաջող, լավ է կազմված ժողովածուին կցված անհասկանալի բառերի բառարանը։ Ժողովածուում ցետեղված են Սունդուկյանցի կյանքից ու գործունեությունից վերցրած տարբեր լուսանկարներ, Սունդուկյանցի վրացերեն նամակի և նրա կատարած վրացերեն թարգմանության ինքնագրերը, վրացերեն բեմադրությունների հին աֆիշները և այլն։ Այսպիսով, տվյալ ժողովածուի վրա նկատելի է հմուտ հետազոտողի վորձված ձեռքը։

Ժողովածուն հրատարակված է լավ ու շքեղ։

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ